զոր օրինակ լախուրի և ակքանի. ունի զօրութիւն պահել շրջակայ զովութիւնս, և երաշխաւոր լինել նոցա ցրտութեան ձմրան եղանակին, հողմոց, և խոնաւութեան դէմ, զորօրի. կանգարի։

Ձեռօք կազմած հողակուտից մէջ, իւրաքանչիւր տնկոց չորս կողմն բարձրացուցանեն կամ մի կոնաձև հողակոյտ, կամ գերամեծարութեամբ իւրաքանչիւր կարգի երկայնութեամբ շարունակ մի հողակոյտ, բրելով մի անջրպետութիւն՝ որ որոշէ զնոյն կարգն իւր մերձակայ կարգէն։

(Շարունակելի)։

Թ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԵՐ. ՍԱՐԳԻՍ ԵՒ ՄԱԿԱՐ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ.

Ի 19ն ամսոյս Գեր. Սարգիս Ս. Արքեպիսկոպոս Հ. Ջալալեանց, և ի 26ն Գեր. Մակար Ս. Արքեպիսկոպոս՝ ասաի ի Ս. Էջմիածնէ վերադարձան իւրեանց վիճակները երթալոյ համար։

ՊԱՏՄԱՆԱԳԻՐ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ.

Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի Հ՚եմարանի այրեցեալ կիսոյ մասին ևն. ամբողջ վերաշինութեան համար՝ Երևանայ նահանգին արքունական երկրաչափ—ճարտարապետին հետ հետևեալ պայմանը կռեցաւ։

Ռանիմաց Ազգայինք անշուշտ կհասկանան՝ զի յանցելումն (Արարատայ Հոկտեմբերի տետրակին մէջ) հրատարակեալ պայմանագիրը և կապակցութիւնքը՝ վերաշինութեան 1\3 մասը կպարունակէր, այսինքն տանեաց, յատակաց գերանաց և այլոց մանր մասանց շինութեան կվերաբերէր, իսկ այս երկրորդ և վերջին պայմանակցութիւնն այրեցեալ մասին ամբողջ վերաշինութեան համար է, ինչպէս որ պայմանագրին մէջ ևս ըստ բաւականին մանրամասնեալ և յիշեալ է, որով 31ն Յունիսի յառաջակայ ամի՝ բաց ի հանդիսարանէն և Հ՚եմարանի ամբողջ յատակաց ներկէն՝ միւս մասունքն պիտի աւարտուին, և Աստուծով՝ նոյն ամսոյ մէջ՝ Հ՚եմարանի աշակերտքը անդր փոխադրել կարելի պիտի լինի։

Ընդհանրական պայմանագրին օրինակ։

"Յամին 1874 ի 18 Դեկտեմբերի՝ ես ի ներքոյ սորին ստորագրեալս Երկրաչափ Կատիթեան Վ. Օրօնցով Վ. Իլեամինով կըռեցի զայս պայմանագիր ընդ Հայոց Սինոդին Ս. Էջմիածնի առ այն, զի յիմ վերայ առնում ի նմանէ զվերջնական վերանորոգութիւն հրկիզեալն Հ՚եմարանի կապակցաբար ամբողջութեամբ ընդ ՀԷՔԵԹՊՈՍԱՆ հազար ռուբլիս արծաթոյ ի վերայ հետևեալ պայմանաց։ ա.) Ի պատրաստութիւն նիւթոց ես պարտիմ ձեռն արկանել անյապաղ, իսկ գործողութեանց աշխատանաց սկիզբն առնել՝ ամսով զկնի հաստատութեան այսր պայմանագրոյ, և յետ այնորիկ յաւարտ ածել զամենայն գործս 31ն Յունիսի 1875 ամի. իսկ զնեղքին շինութիւն գմբեթին և զներկուցն տախտակամածից 31ն Հոկտեմբերի նորին տարւոյ։ Յիմ

պարտաւորութիւն ընդունիմ զկատարումն հետեւեալ աշխատութեանց. դնել ի ներքնայարկի յայնոսիկ սենեակս, յորս տախտակայատակք էին և ի սենեկին, յորում ջրատունն էր, և յերկոսին ևս սենեակս որ ի ներքոյ հանդիսարանին՝ գերանս յատակաց քառակուսի հաստութեամբ 4 մոնչփ. հեռաւորութեամբ յիրերաց առ 1 արշին: Բ.) Յերկոսին սենեակս, որ ի ներքոյ հանդիսարանին՝ առ տողելոյ զտախտակամածն՝ հանել զկարեւորն քանակութիւն հողոյ: Գ.) Տախտակամած յօրինել յամենայն սենեակս վերնայարկի և ներքնոյն ի տախտակաց, որոց հաստութիւն իցէ յար և նման եղելոցն ի վերայ յատակաց չայրեցեալ մասին Ճեմարանի: Դ.) Զհին տախտակամածս վերնայարկին և ներքնայարկին հարթել քերչաւ: Ե.) Զամենայն զնոր տախտակամածսն հանդերձ տախտակեայ եզերօք ներկել յերկուս նուագս ձիթաներկով. զհինսն ի վերնայարկի և ի ներքնայարկի ներկել ըստ նմին օրինակի: Զտախտակամածսն հանդիսարանի ներկել ի ձէ (քառակուսի: Զ.) Զառաստաղս բովանդակ ներքնայարկին աղխաղխել տախտակօք 3/8 վերշոկ հաստութեամբ, շինել զեզերս տախտակեայս և աղխաղխել զՖիլենքայս (Թամուսա) ըստ օրինակի եղելոցն, և յետ այնորիկ ներկել զայնս սպիտակ ձիթաներկով, իսկ զեզերս և զկոլթելս (Թամուսա) գեղնագունիւ: Է.) Նորոգել զեղեալ սանդուղն հանդիսաւոր մտից, շինելով նմին յենարանս և հաստատելով զվայրահակեալ մասունս գերանին (կամարին) երկաթակապօք և հաստ բեւեռօք, շինելով զնոր սանդուղ ի նախկին հիւանդանոցն և ներկելով զտախտակեայ երեսս սանդղոյ յեղեալն գոյն: Ը.) Նորոգ շինել ի բովանդակ հրկիզեալ բաժնի Ճեմարանի զպատուհանս փեղկօք փակուցելովք ըստ օրինակի եղելոցն, անցուցանելով զապակիս, ներկելով և դնելով զպահանջեալ պարագայսն: Թ.) Նորոգ շինել զ25 դարձեկս (շրջանակս) դրանց ըստ օրինակի եղելոցն՝ յաւելմամբ ի հին դուրս զնիգս երկաթեայս պահանջեալն քանակութեամբ: Ժ.) Շինել զկարեւորն քանակութիւն դարձեկաց (շրջանակաց) յեղեալ պահարանս առկախմամբ հնոց դրանց և յաւելմամբ նգոց: ԺԱ.) Զամենայն դարձեկս ներկել յառաջին գոյն: ԺԲ.) Շինել ջրատուն (արտաքնոց) ի վերնայարկի համաձայն եղեալ յատակագծի, և առ այս՝ ի ներքնայարկին սակս զատանելոյ զխողովակս արտաթորութեան՝ միով աղիւսով բարձրացուցանել զորմն փոքրիկ ծեփածոյ գաճով, շինել խողովակս 5, մածուցեալ ի միջնավայրն զցինկ (կլիսամետաղ, արոյր): Շինել միջնորմ տախտակեայ բաժանեալ զջրատունն ի 5 բաժանմունս. շինել իւրաքանչիւր բաժանման նստարան մածուցեալ ի վերնակողմն, ի շրջապատն և ի յատակն թերթս ցինկ (կլիսամետաղի) և յիւրաքանչիւր բաժանումն շինել դուռն առանձին մթնագոյն ապակեօք, պարտեպաշտած պարագայիւք, այն է դռնափակօք և նիկլին օղակօք: Զմիջնորմն բովանդակ ծեփել գաճով: Զխողովակս և զամենայն տախտակեայս նստարանաց պարտ է ձիւթապատել: ԺԳ.) Փակել ի բովանդակ այրեցեալ մասին Ճեմարանի զեղեալն ծեփ, և յետ այնորիկ նորոգ ծեփել զորմունս ըստ հետեւ-

լոյն։ Յամենայն սեննակս, ուր թղթապատք լինելոց են՝ ծեփել յերկուս նուագս, զառաջինն հաստատութեամբ համաձայն կարեւորութեանն ի $^{1}/_{2}$է մինչեւ ց$^{3}/_{4}$ վերշոկի՝ ի մոխրագոյն գաճոյ՝ յարակցեալ յայն զ$^{1}/_{3}$ կաւոյ, զերկրորդն ի մոխրագոյն գաճոյ։ Զամենայն առաստաղս ծեփել յերիս նուագս, յորոց վերջինն ի սպիտակ գաճոյ ըստ եղանակի եղելոցն առաստաղաց։ Զներքանցս ծեփել յերիս նուագս ըստ օրինակի միւսոյ մասին։ Զհանդիսարանն ծեփել յերիս նուագս, զսիւնս եւ զեզերս տախտակեայս շինել ըստ օրինակի ընդ սմին եղեալ յատակագծի. իսկ զշինութիւն առաստաղին եւ այլոց մասանց՝ որպէս Նորին Վեհափառութիւնն կամիցի՝ ըստ օրինակի առաջնոյ եղանակին։ ԺԴ.) Ի ներքնայարկի, յորում արտաքնոյն էր, ի դուռն փոխել զպատուհան եւ շինել սանդուղ ի տաշեալ քարէ։ Դուռն պարտի լինել ՖԷԼԷՆՔԱՐԷ, (ցանցակերպ հիւսեալ) ներկեալ յեղեալն գոյն. իսկ առաջոյ դրան ի դէպս կարեւորութեան պարտ է շինել զներքին կամար աղիւսեայ։ ԺԵ.) Ի վերնայարկի եւ ի ներքնոյն շինել զ23 Հոլանտեան վառարանս՝ կցեալ ի նոսա զչուկուններայ պարագայս եւ հաստատելով խողովակս յորմունս, զոր պարտ է առնել պարեւպատշաճն զգուշութեամբ. ի վերայ եւ ի ներքոյ տանեաց շինել զկարեւորն քանակութիւն ծխնելուզաց, որք ըստ կարեւորութեանն պարտին լինել առ 2, 3 եւ 4 ծխնելոյզս։ ԺԶ.) Կատարել զնորոգութիւն թղթադարդնին յայն տեղիս, յորս պարտին քակել որմունս. իսկ զթըղթեան Վանքն պարտի տալ։ ԺԷ.) Մածուցանել թղթադարբլս յայնոսիկ սեննակս վերնայարկին եւ ներքնայարկին, յորս կանխաւ եւս կայր, նոյս ըստ օրինակաց, զորս ընտրեսցէ Նորին Վեհափառութիւնն. բայց զի գին իւրաքանչիւրոց թերթի (պաստառի) լինիցի ի 40 կոպէկէ մինչեւ ց50, եւ վասն այսորիկ հարկ լիցի զիսկականն հաշիւ մատուցանել ի խանութէն, յորմէ նոքին գնեսցին։ ԺԸ.) Ի սեղանատան շինել պահարան ի տեղի նախկին լուացարանի, եւ կատարել յամբողջ շինութեան զմանր նորոգութիւնս, այն է՝ նորոգութիւն ծեփոյ, լրումն ապակեաց, նորոգումն մնացեալ լուսամտից ի չայրեցեալ մասին, նորոգութիւն քարայատակաց, փանդակաց, ներկ նոցին եւլն։

Ի շինութիւն Հանդիսարանի կատարել զհետեւեալ աշխատութիւնն։ ԺԹ.) Դնել ընդ երկարութիւն որմանց ՖՈՒՆԴԱՄԷՆՏ (որմնակալս, նալ) ի քառակուսի տաշեալ գերանաց 3 եւ 4 վերշոկ հաստութեամբ, իսկ ի նոսին հատեալ ամրացուցանել կողս 40 բաղկացեալս յ3 վերշոկեայ տախտակաց մածուցելոց սոսնձաւ եւ քաթանաւ եւ միացուցեալ բեւեռօք. ի կողս անցուցանել նեցուկս 6 արշին բարձրութեամբ. ի նեցուկսն յարմարել զվերջին շրջանակապն՝ անցուցանելով յայն խաչաձեւ գերանս, որպէս ցուցեալ է ի յատակագծի. եւ ի միջնավայրի շինել օղակ վասն ջահի։ Շինել ի վերնակողման գմբեթին զգերանակապս եւ վասն այսր դնել զ15 արշիննոց քառակուսի տաշեալ գերանն, յոր ամրապնդել զ16 յենարանս (նեցուկս). իսկ ի սոսին շինել վերադիրս (ծածկոյթս) վասն տալոյ զպահանջեալն ձեւ. եւ ապա յետ շինելոյ զվերնածածկն՝ որ լինելոց է ի $^{1}/_{2}$ վերշոկ հաստութեամբ տախտակաց՝ ծած-

կել զգմբեթն թերթ թերթ թիթղամբ և ներկել ձիթաներկով։ Ի վերայ գմբեթին շինել զկատար սրածայր և ի գագաթան զգրիչ երկաթեայ։ Զառաստաղ գմբեթին բևեռել ճաղքաւիւք վասն ծեփոյ և դնել սիւնս 16՝ շինելով և զեզերսն։ Զառաստաղ և զորմունս ծեփել ըստ 13րդ յօդուածոյ սորին պայմանագրոյ. շինել ի վերնոյ մասին գմբեթին զ8 գոյնզգոյն լուսամուտս ըստ ձևոյն հաւանելոյ ի Նորին Վեհափառութենէ։ Շինել զ8 լուսամուտս ի նմին դահլճի հանդերձ դարձեկօք, ներկով, դնելով զապակիս և զպարագայս. շինել զմի դարձեկ ընկուզեայ և առկախել զեզեալ դուռնն։ Ժ.) Առ ամենայն պատուհանս առհասարակ շինել պատուանդանս ի մանուշակի տախտակաց։ Ժա.) Յառաստաղս, յորս կարևոր դատիցի, շինել զդեղնապղնձեայ օղակս վասն լապտերաց։ Ժբ.) Յերս տանեաց ի վերայ չայրեցեալ մասին շինել զյարկ (ծածկոյթ)։ Ժգ.) Արձ ի գերանակապս գմբեթին, առ բաժանելոյ զայն ի մնացեալ շինուածոյն, շինել զվահանակերպ որմունս յաղիւսոց ի կերպ Բրանդմաուէրայ (միջնորմ). և Ժդ.) Զառաջեաւ կողմնական ելից ի Ճեմարանին շինել արտաքնոց վասն 8 տեղեաց ի հում աղիւսոյ (сирцовый), դնելով գերանս և ծածկելով երկաթեայ յարկաւ, և արտաքնոցն պարտի միանալ ընդ նրբանցս յարկաւ և ձեմելեաւ և չուգունեայ վառարանաւ։ Ժե.) Ամենայն աշխատութիւնք առհասարակ պարտին կատարել ամուր, կանոնաւոր և ի նիւթոց հետևեալ յատկութեանց. 1, ատաղձ եղևնափայտեայ ի Տփխիսոյ, և տախտակք գմբեթին չորացեալք բոլորովին. 2, երկաթ Յակովբեան ամենայնաւ. 3, ձէթ կտուահատի. իսկ վասն տախտակամածից կանեփեայ՝ բերեալ ի Տփխիսոյ. 4, ապակիք առանց պղպջակաց յարտասահմանէ և ամենասպիտակք. 5, գաճ վասն երեսաց որմանց ամենայնաւ. 6, բևեռք արտասահմանեայք, և 7, երկաթակապք ամուրք և բարեշէնք։ Ժզ.) Վանքն պարտի տալ ինձ զհին դրունս, զմնացեալ վանդակասիւնս և զմնացեալ երկաթակապն որ ի վերայ գմբեթին. իսկ եթէ վանդակասիւնքն չբաւականասցին վասն սանդղոյ, զայնպիսին՝ որչա՛փ և կարևոր դատիցի՝ պարտիմ շինել յինքենէ։ Ժէ.) Յամենայն ժամանակի գործողութեանց նըշանակեալն ի կողմանէ Նորին Վեհափառութեան Եպիսկոպոսն ունի իրաւունս հսկելոյ՝ զի ի գործ եդեալ նիւթքն լինիցին այնու քանակութեամբ՝ որպէս ցուցեալն է ի պայմանագրին։ Իսկ Վեհափառ Պատրիարքն՝ եթէ կամիցի՝ յետ կանխագոյն ընդ իս համաձայնութեան՝ կարէ փոխել կամ ընտրել զքանի մի նիւթեղէնս վասն ներքին շինութեան, որպիսիք են՝ զձև և զկերպ պատուհանաց, զձև նկարազարդուց, թղթազարդ, զպարագայս դրանց և պատուհանաց, այլ և զգոյն ներկոց, որոց տեսակք ըստ ցանկութեան Նորին Վեհափառութեան՝ պարտին նմին ցուցանիլ։ Ժը.) Եթէ ես ի ժամու չկարացից աւարտել զգործողութիւնսն, յայնժամ վասն իւրաքանչիւր աւուր անկատար մնալոյն պարտիմ տուժել զ15 ռուբլիս, զորս պարտին յինէն արգելուլ ի ժամ վերջնոյ հաշուատեսութեան. իսկ ի միւսմէ կողմանէ եթէ Վանքն ինշանակեալ միջոցս որ ի հետևեալ յօդուածի՝ չտայցէ ինձ դրամս,

վասն իւրաքանչիւր կորուսեալ աւուրն պարտի տուժել 15 ռ. արծ։ ԼԸ.) Ի ժամ հաստատութեան այսր պայմանագրոյ իրրև առհաւատչեայ ես պարտիմ ընդունել զ3000 ռ. արծ. յետ ամսօրեայ ժամանակի հաստատութեան պայմանագրոյս, յորժամ ես սովին գումարաւ հատուցից զնիւթսն, պարտին տալ ինձ ի պատրաստութիւն նորոց նիւթոց և կատարումն աշխատութեանց՝ այլ ևս 3000 ռ. և յետ այնորիկ տուչութիւն դրամոց պարտի լինել հետևեալ եղանակաւ. յետ շինելոյ զհիւսնական և դյարկաց աշխատութիւնս դմբեթին՝ 1400 ռ. յետ շինութեան վառարանաց՝ 1400 ռ. յետ շինելոյ զառաստաղս ի ներքնայարկի և դնելոյ զգերանս ի հանդիսարանի՝ 1000 ռ. յետ շինելոյ զգաղափար արտաքնոցաց և յետ դնելոյ զգերանս ներքնայարկին՝ 800 ռ. յետ ծեփոյ վերնայարկին և ներքնայարկին՝ 700 ռ. յետ զտախտակամածն յօրինելոյ ի վերնայարկի և ի ներքնայարկի 700 ռ. յետ շինութեան ներքնակողման հանդիսարանին՝ 1000 ռ. և յետ զամենայն գործսն աւարտակերտելոյ և զձեմարանն յանձնելոյ՝ 1000 ռ։

Լ.) Ընդունելութիւն ամենայն գործոց աշխատութեանց պարտի լինել յընթացս միոյ եօթնեկի յետ աւարտման շինութեան. և եթէ կամք լինիցին Տորին Վ. հափառութեան՝ ի վկայութիւն գործոց կարէ հրաւիրել զվերատեսուչն շինութեանց Գլխաւոր Կառավարութեան. իսկ յետ այնորիկ զկնի յանձնելոյ զՁեմարանն՝ բոլոր պարտաւորութիւնք իմ ըստ այսմ պայմանագրոյ դադարին։ ԼԱ.) Ի դէպ կատարման աշխատութեանց կամ զննութեան նոցին՝ եթէ երևեսցի ինչ յոռի գործեալ կամ անկանոն, զայնպիսին ես պարտիմ անյապաղ վերաշինել կամ նորոգել յընթացս միոյ ամսեան յիմ հաշիւ. և վասն այսր մինչև ցվերաշինութիւն նոցին՝ պատկանեալ ինձ դրամն 1000 ռուբլեաց ոչ տացի. իսկ եթէ զնորոգութիւնս ամենևին իսկ չիցեմ կատարեալ՝ զգումարն զայն տուժեմ ես գլխովին. բայց զննութիւն գործոց պարտի կատարիլ միայն ընդ ձեռն երկրաչափի գլխաւոր կառավարութեան։ ԼԲ.) Եթէ երևեսցի՝ զի ի հին դրանց 1/6 մասն անպիտանք են վասն գործածութեան, յայնժամ զայնպիսին յինքենէ շինել պարտիմ նոր ի նորոյ։

ԼԳ.) Պայմանագիրս այս պարտի յերկուց պայմանագիր կողմանց պահպանիլ սրբութեամբ և անխախտութեամբ։

(Պորտրէտ-ՌՆ-ն).

Սոյն Պայմանի մէջ իրր մի հազար մանէթի արժողութեամբ՝ չայրեցեալ մասի մէջ վերանորոգելիք ինչ ինչ պարագաներ կան։

Ի ՆՊԱՍՏ ՁԵՄԱՐԱՆԻ.

Գոհութեամբ կհաղորդեմք՝ զի Երևանայ արքունական Վ. արժարանի Հայկազուն մի քանի աշակերտք՝ իւրեանց ներքին և բուռն եռանդէն թելադրեալ՝ Ձեմարանի այրեցեալ մասի վերանորոգութեան նպաստելոյ բարի նպատակաւ՝ ամսոյս մէջ թատրոնական մի ներկայացումն տուած են, յորմէ դոյացած զուտ արդիւնքը ևս ներկայացուցին Վ. Հ.

Հայրապետին, որոյ քանակութիւնը ի ժամանակին կհրատարակեմք։

Դարձեալ Երեւանէն կհաղորդեն մեզ՝ զի մերազնեայ մի քանի երիտասարդներ եւ վարժապետներ եւս նոյնպիսի նպատակաւ մի քանի թատրոնական ներկայացումներ պիտի տան յառաջակայ ամսոյ մէջ։

Անշուշտ նոյնպիսի բարեգործութիւնք կրկնակի բարի նշանակութիւնքը եւ ազգօգուտ տպաւորութիւնքը ունենալով՝ միշտ մեծ շնորհակալութեանց եւ գովեստից արժանի են։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲՈՒԶԱՆԴԵԱՆ·

ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՆԱՒՈՐ ԵՂԱՆԱԿ.

Հետեւեալը Մասիսէն օրինակելով՝ Հայկաբանութեան դասատուաց ուշադրութեան կյանձնեմք։

‹‹Ազգային հմուտ գրագէտ Մեծ. Ա. Մ. Գարագաշեան էֆէնտին Հայերէն գրաբառ լեզուի ուսուցման բանաւոր եղանակը ցուցնելու եւ հակառակ կարծիքները ցրելու նպատակաւ հետեւեալ յօդուածը ղրկած է մեզ ի հրատարակութիւն։

‹‹Պ. Սուրէն հրատարակեց Մասիսի 1600 եւ 1601 թիւերուն մէջ մեզի դէմ՝ պատասխան մը, ուր դարձեալ մինչեւ երկինք կբարձրացնէ իւր միակ միջոցը ‹‹լաւ Հայերէն ունելու››՝ այն է գրաբարէ աշխարհաբարի թարգմանել։ Շատ երկայն կըլլար մի առ մի պատասխանել Պ. Սուրէնի երկայն եւ ցամաք փաստաբանութեանց, որոնցմէ կուզէ եզրակացնել թէ՝ Հայերէն լեզուն ուրիշ միջոցաւ չիսորվուիր՝ բայց եթէ գրաբարէ աշխարհաբար թարգմանելով, եւ այն՝ իւր Քերականութեամբ միայն։ Ըստ Պ. Սուրէնի, ‹‹մինչեւ ցարդ աշխարհաբարին այսքան յառաջխաղացութիւնը գրաբարէ աշխարհաբար թարգմանութեանց արդիւնքն է››, եղեր, ‹‹աշխարհաբարէ ի գրաբար թարգմանելն ալ օգտակար մաս մ'է››, եղեր ‹‹վարժութեան, բայց այս՝ կրթութիւնը գրաբարէ աշխարհաբար թարգմանելու վարժուելէն ետքը կըլլնի››, եղեր. ‹‹աղէկ աշխարհաբար անոնք միայն կգրեն››, եղեր, ‹‹որ գրաբարէ աշխարհաբար թարգմանելու՝ վարժուած են ի՛սկզբանէ։›› Վերջապէս թէ գրաբար եւ թէ աշխարհաբար աղէկ գրել, ըստ Պ. Սուրէնի, գրաբարէ աշխարհաբար թարգմանելով›› կըլլնի։ ‹‹Ասկէ ի հարկէ պիտի՛ հետեւի թէ Սահակ, Մեսրոպ, Եզնիկ իրենց Ոսկեղէնիկ հայերէնը գրաբարէ աշխարհաբար թարգմանելով սորվեցան. Նոյնպէս Մխիթարեան վարդապետները եւ այլք՝ որ այնչափ երեւելի գործեր Հայերէն գրաբար եւ աշխարհաբար շարադրած եւ թարգմանած են՝ գրաբարէ աշխարհաբար թարգմանելով սորվեցան իրենց Հայերէնը։ Մասիսի 1601 թուոյն մէջ Պ. Սուրէնի պատասխանէն անմիջապէս ետքը դրուած գրաբար քերթուածը գրող Կ. Ս. Կամիկեան պատանին, Շահնազարեան վարժարանի աշակերտը, նոյնպէս գրաբարէ աշխարհաբար թարգմանելով սորված է Հայերէն։ Ի՞նչ պէտք է երկարել, գրաբարէ աշխարհաբար թարգմանելը Պ. Սուրէնի փիլիսոփայական քարն է Հայերէնի համար, Հայերէն լեզուին քիմիական համազօրը. այնպէս որ գրաբարէ աշխարհաբար թարգմանել եւ ‹‹Հայերէն ունիլ››, Պ. Սուրէնի համար մի եւ նոյն բան է։

Գրաբարէ աշխարհաբար թարգմանելով միայն Հայերէն չիսորվուիր. որ եւ իցէ լեզու կսորվուի այլ եւ այլ կրթութիւններով. ասոնց մին է թարգմանելը, բայց ամենէն կարեւոր եւ գործնական կըրթութիւնը գրելն է։ Սակայն թողունք առ այժմ այս կէտը՝ որ մեր բուն խնդիրը չէ, եւ բուն խնդրոյն գանք։

Պ. Սուրէն այնպէս յափշտակուած է իւր գըրաբարէ աշխարհաբար թարգմանելու դրութեան բացարձակ գերազանցութենէն, որ՝ ինչպէս կը տեսնուի՝ չհասկցաւ մեր առաջին յօդուածը։ Մեր խօսքը գլխաւորապէս Հայերէն սորվելու եղանակին վրայ չէր եւ չէ, այս երկրորդական խընդիր է։ Բուն խնդիրը սա է թէ Հայու մը հայերէն սորվեցնել ինչ ըսել է. կամ, ուրիշ բառերով